ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1 (17), 2008

ՀՏԴ 891.981.0 *Գրականություն*

ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՇՏՈՑԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Լ.Ս. Գրիգորյան

Հայ պատմագիրների, մասնավորաբար Խորենացու և Կորյունի վկայությունները հակադրելով սովետական պատմագրականագիտության մեջ արմատավորված աթեիստական սկզբունքներին քչող տեսակետներին՝ հոդվածագիրն այն միտքն է զարգացնում, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը երկնելիս ազդվիել է Աստծո գոռությանը:

Հայկական գրերի գյուտը, Մեսրոպ Մաշտոցի անունն անխզելիորեն կապված են քրիստոնեության հետ: Նա Աստծո առաքյալներից մեկն էր ոսկեդարյան հայ դարության մեջ և նա ողջ գիտակցական կյանքում անսացել է Աստծո այն պատգամին, որ՝ «Ոչ հացիվ միայն կենցի մարդ, այլ՝ ամենայն բանիվ Աստուծոյ» («Ղուկաս» Ղ-4): «Մաշտոց» բառը նշանակում է՝ սուրբ-երանելի, պատվաբեր մի անուն, որ ունեին միայն Աստծո առաքյալները, սուրբ կյանքով ապրող աստվածաշնչյան հերոսները: Հայագետ Աբրահամ Զամինյանը իր «Հայոց եկեղեցու պատմությունը» գրքում վկայում է.»... Յոր մաքուր վարքովն ու կրոնասիրությամբ զգվելով աշխարհի կյանքն նա իրեն ճգնության տվեց՝ ունենալով իր հետ շատ աշակերտներ»:

Հայ իրականության մեջ Սահակն ու Մաշտոցը և նրանց աշակերտներ Եզնիկն ու Կորյունը առաջիններից էին, որ ամբողջ հոգով, իրենց ողջ էությամբ կապվեցին «Աստվածաշնչի» հետ և ժողովրդին քարոզեցին Աստծո խոսքը: Ի դեպ, Սուրբ գիրքը Մաշտոցը կարդում էր հունարեն կամ ասորերեն լեզվով և թարգմանում, բացատրում մարդկանց: Նա երազում էր հայ ժողովրդի ձեռքը դնել «Աստվածաշունչը» մայրենի լեզվով: Անչափ մեծ էր սուրբ Մեսրոպի փափագը՝ ստեղծել հայոց գրերը:

Ղուկասի ավետարանը (14/11) պատգամում է. «Ով որ իր անձը կբարձրացնի՝ պիտի խոնարհի, ով որ իր անձը կխոնարհեցնե՝ պիտի բարձրանա»: Մեսրոպ Մաշտոցը «Հաճախապատում ճառքում» մարդու բարոյական ամենաբարձր նորմաների հիմքերից մեկը համարում է հեզությունը: Ըստ նրա՝ հեզությունն առաքինության զորությունն է, բարության և խաղաղության հիմքը: Եվ ինքը՝ Մաշտոցն իր իմացությամբ, երբեք չէր հպարտանում՝ քաջ իմանալով, որ Աստված զորություն է տալիս հեզերին և ամբարտավանքներին չի սիրում: Խոնարհելով իր անձը՝ նա ազդվիում էր Աստծո զորությանը: Այդ մասին են վկայում և Խորենացին, և Կորյունը, և Փարպեցին:

Ե՞րբ է մարդու կյանքում հայտնվում Աստված: Այն ժամանակ, երբ մարդ իր ցանկությունները իրագործելու համար հրաժարվում է բոլոր տեսակի մարդկային ձևերից, զգում իր անկարողությունը, ունայնությունը և ի խորոց սրտի, հավատքով դիմում է Աստծո զորությանը: Աստվածահայտնությունն իրականանում է նաև այն ժամանակ, երբ մարդ արարածը ապրում է սուրբ կյանքով, հեռու մնում փոքր ու մեծ մեղքերից, ապրում հոգևոր՝ հավատքի կյանք: Քերթողահայր Խորենացին Մեսրոպ Մաշտոցի մասին գրում է. «...Գերազանցում էր բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք կային այն ժամանակ: Որովհետև ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով՝ երևում էր բոլորին երկնայինների սովորությամբ զարդարված («Հայոց պատմություն», էջ 312):

Սուրբ գիրքը հավատում է, որ նա, ով սրտանց ու հավատքով կխնդրի, Աստված կօգնի նրան: Ուրեմն՝ Մեսրոպ Մաշտոցի անձն ու կյանքի հետագիծն անարատ էին, սուրբ: Ահա թե ինչու, հրաժարվելով հայոց գրերը ստեղծելու բոլոր մարդկային ձևերից, Մաշտոցն ապավինեց աղոթքի զորությանը, և տեղի ունեցավ աստվածահայտնություն: Մովսես Խորենացու պատմության մեջ հստակ ընդգծված է աստվածահայտնության տեսարանը և արտահայտված այն գաղափարը, որ Մաշտոցը գրերի գյուտը հնարել է՝ շնորհի ստանալով Աստծուց: Դա, իրոք, երկնային շնորհ էր, որ իջել էր Մաշտոցի վրա՝ աղոթքի պահին: «Եվ տեսնում է ոչ նրագ քնի մեջ, ոչ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթը քարի վրա գրելիս, այնպես որ, քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն նրանց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին՝ ինչպես մի ամանում: Եվ աղոթքից մեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագրերը» (էջ 292):

Խորենացին պատմում է, թե ինչպես այնուհետև Մեսրոպ Մաշտոցը գնաց Վրաց աշխարհը, նրանց համար էլ իրեն տրված երկնային շնորհով ստեղծեց նշանագրերը:

Աստվածային սիրո տիեզերական պատգամավոր՝ հայոց գրերը, ուղղված էրն համայն հայությանը՝ Քրիստոսին ընդունած ու սիրող հնագույն ժողովրդին:

Հայոց գրերը՝ մեսրոպաձին ու սուրբ, աստվածահայտնության արգասիք են, Սուրբ Երրորդությանն ու միաստվածությանն անմնացորդ նվիրվածության աստվածաշնորհ պարգև: Այս մասին կարդում ենք նաև Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքում: Աստվածային շնորհի մասին Կորյունը հիշատակում է մի քանի անգամ. «Ընչանագիրն աստվածատուր... հանդերձ շնորհատուր տարգնոցն», «որում պարգևներ իսկ վիճակ յամենաշնորհողն Աստծո», «աքանչելի սուրբ աջովն» և այլն:

Մենծանուն Հրաչյա Աճառյանը «Հայոց գրերը» գրքում թեև մնջբերում է Կորյունի խոսքերը հայոց գրերի աստվածահայտնության արդյունք լինելու մասին, չի հաստատում, սակայն, այդ հոգևոր ճշմարտությունը՝ ասելով, որ «Խորենացին ակնարկությունները մեծացնելով, վերածում է հայտնի հրաշքի, որի համեմատ Աստված տեսիլքի մեջ հայտնում է Մեսրոպին մեր հայերեն գրերը»: Աճառյանը, չգիտես ինչու, հայտնում է այն կարծիքը, որ՝ «թեև Կորյունը, իրոք, հավատացած լիներ, թե Մեսրոպն Աստծու հայտնությամբ (հրաշքով) ստացավ հայերեն գրերը, անկարելի է, որ այսն կնոջպով չծանրանար այդ կետի վրա, ինքը, որ առիթ է փնտրում Մեսրոպին «աստվածամերձ» ցույց տալու և Մովսեսի հետ համեմատելու ժամանակ՝ իր արածը հանդգնություն չէր կոչի»: Կարծում ենք՝ դա պայմանավորված է ժամանակին բնորոշ մտածողությամբ:

Նախ՝ նշենք, որ Կորյունը ևս լինելով աստվածավախ ու հավատքով, ինչո՞ւ պետք է «ծանրաբեռնը« փաստը և բացի այդ՝ մի քանի անգամ աստվածատուր շնորհը շեշտելը մի՞թե ապացույց չէ: Աստվածահեզ Կորյունը հանդգնություն է համարում Մաշտոցին Մովսեսի հետ համեմատելիս, որովհետև աստվածաշնչյան հերոսին մոտենում է վախով ու գգուշությամբ, բայց Մովսեսն էլ Աստծո զորությամբ էր իսրայելացիներին դուրս բերում Եգիպտոսից: Ասում ենք՝ «Աստվածաշունչը» ամենաճշմարիտ գիրքն է, ուրեմն, ճշմարիտ են նրանում տեղ գտած աստվածահայտնության բացում օրինակները, բայց ինչո՞ւ ժխտենք այն Սուրբ Մեսրոպի կյանքում:

Ինչպես Աճառյանն է փաստում՝ «Խորենացու տեսիլքին հետևում են մեր բոլոր հետագա պատմիչները և հայերեն տառերը համարում են աստվածային հայտնություն, որ քանի առաջանում ենք դեպի նոր ժամանակները, այնքան ավելի նյութական կերպարանք է ստանում» (էջ 127):

Հարց է ծագում՝ Մեսրոպ Մաշտոցի ապրած ժամանակներո՞ւմ կգրվեր ճշմարտությունը, թե՞ դարեր հետո, ինչո՞ւ չհավատանք հինգերորդ դարի պատմագիրներին, որոնք Աստծո հավատացյալներ էին և չէին կարող սուտը գրել, իսկ նոր ժամանակներում, երբ ամեն ինչ նարսխված է նյութականի վրա, գլուխ է բարձրացնում Իսահակյանի «ոգու տվը»:

«Խորենացին,- գրում է Աճառյանը,- մեր գրերին հրաշքի ծագում տալու համար աստվածային հայտնություն ընծայելով նրանց՝ նվաստացնում է Մեսրոպի անձնական արժանիքն ու գործը...»: Կարծում ենք, ճիշտ չէ մեծ գիտնականը՝ աստվածահայտնությունը Մաշտոցի դյանքում ոչ թե նսեմացնում, այլ ավելի է բարձրացնում նրա սուրբ ու երանելի անձը, որը ինգության մարմնացում էր, և Աստված հայտնվեց նրա կյանքում, օժտեց հայոց գրերը ստեղծելու շնորհով, և այդուրեմն մեր ժողովրդին դուրս բերեց խավարից:

Բանահավաք-գիտնական Արամ Ղանալանյանը իր «Մեսրոպ Մաշտոցը հայկական ավանդություններում» ուսումնասիրության մեջ նշում է. «Ավանդապատմությունների մի մասը հորինվել է դեռևս 5-րդ դարում՝ գրերի գյուտի անմիջական տպավորության տակ և կրում է յուրօրինակ հուշապատմությունների բնույթ: Ուրիշները խմորվել են միջնադարում՝ մեծ լուսավորչի անձի ու գործի վերաբերյալ ժողովրդի մեջ հարատևած հնօրյա հիշողություններից»:

Ղանալանյանի խոսքում աստվածահայտնությունը, ինչպես տեսնում ենք, բնութագրվում է որպես հուշապատում, հնօրյա հիշողություն, այսինքն՝ 5-րդ դարից և միջնադարից մեզ հասած իրական պատումներ, որոնք բերնեբերան անցնելով՝ ավանդվել են մեզ, ինչպես օրինակ, մեր անմահ էպոսը:

Աստվածահայտնությունն ուղեկցել է Մեսրոպ Մաշտոցին ցմահ: Խորենացու «Հայոց պատմությունը» հուշում է, որ խաչի ձևով ադոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ Մեսրոպ Մաշտոցն ավանդեց իր հոգին, և այն ոչ թե անհետացավ, այլ «տեսանելի դարձավ հավաքված բազմությանը: Լուսնելն խաչը չլքեց նաև հուղարկավորության ժամանակ, երբ ջերմեռանդ հավատացյալ Վահան Ամատունին Մաշտոցի մարմինը արժանավայել հուղարկավորությամբ տարավ իր գյուղը՝ Օշական: Խորենացին գրում է. «Լուսնընն խաչի երևույթը դագաղի վրա գնում էր դեմ-հանդիման բոլոր ժողովրդին, մինչև նրան հողին հանձնեցին Վահանը և նրա սպասավոր Թաթիկը, որից հետո նշանն աննկարագրելի դարձավ»:

Խորենացին վկայակոչելով բազմաթիվ արժանահավատ անձանց՝ նշում է, որ լուսնընն խաչն աստվածահայտնության նոր ծն էր, որը տեսնելով՝ հազարավոր հայեր հավատքի եկան ու անմիջապես մկրտվեցին:

Ինչպես հայոց գրերը սովետական ժամանակներում ունենք չէին ուզում ընդունել որպես աստվածահայտնության արդյունք, այնպես էլ որոշ գրականագետներ փորձում էին ապացուցել, թե, իբր, դղեակի վրա արծաթե խաչ էր դրված, որի արտացոլանքն էր արևի տակ: Զարմանալի է ինչպե՞ս կարող է խաչն արտացոլվել օդում, կախվել ուղղահայաց՝ ժողովրդին դեմ-հանդիման, գնալ ինչ-որ հարթության վրա արտացոլված լիներ... Հարց է ծագում, իսկ Մաշտոցի տան վրա կախված լուսնեղեն խաչն ինչի՞ արտացոլանք էր:

Մարդը պետք է հոգևոր լինի, որպեսզի չժխտի իրական աներևույթը: Հիշենք, որ 1992թ. մայիսին, երբ պետք է ազատագրվեր Շուշին, քաղաքի վրա կախված էր լուսնեղեն խաչ, որը տեսել էր Պարգև Սրբազանը և նրա խորհրդով թե գրահատեխնիկան և թե զինվորները խաչեր էին կրում: Շուշիի լուսնեղեն խաչը ինչի՞ արտացոլանքն էր, ինչո՞ւ ենք ինքներս խնդրությունում իրականությունը:

Պատշաճ է, հիշենք, որ դարեր շարունակ վիճաբանության առարկա է եղել նաև Գրիգոր Նարեկացու հռչակավոր «Մատյան ողբերգության» պոեմը: Գրականագիտությունը այս սուրբ ազոթագիրքը դուրս էր բերել որպես աստվածընդդեմ մի երկ, իսկ Նարեկացուն՝ Աստծո դեմ ելած մի ըմբոստի: Բայց, փաստ Աստծու, այսօր ճշմարիտ արժեքավորում է ստացել այդ հրաշալի գրական կոթողը: Աթեիստական գաղափարախոսությամբ տոգորված գիտնականները միտումնավոր ժխտելով «Աստվածաշունչը», նույն ձևով ժխտում էին աստվածաշնչյան բոլոր այն պատմական տեղեկությունները, որոնք վերաբերում էին մեր ժողովրդի վաղնջական պատմությանը: Ու բնավ զարմանալի չէ, որ նրանք ի հայտ էին բերում փաստերն ու վկայությունները ժխտելու, ոչնչացնելու, վերացնելու մեթոդը: Դա էժանագին, պարզունակ այն մոտեցումն է, որով հայոց հնագույն պատմության բոլոր դեմքերը համարվում են առասպելական»,- գրում է գրող և պատմագետ Լևոն Միրիջանյանը:

Կարծում ենք, որ գրերի գյուտի վարկածն էլ գտնվում էր աթեիստական գաղափարախոսության կրնկի տակ, և հասել է այն սերունդներին ճշմարտացիորեն հասցնելու ժամանակը: Աստվածահայտնության վարկածը Մաշտոցի կյանքում գեղարվեստորեն արտացոլվել է հայ գրականության մեջ, առավելաբար, Սիամանթոյի «Սուրբ Մեսրոպ» պոեմում: «Ներբողականում» դիմելով Օշականի սուրբ գերեզմանին՝ բանաստեղծը Մեսրոպ Մաշտոցին որակում է «մտքի փրկիչ» «հույսի հսկա», «Հիսուսի բազմաբարյան պատմուճան» և այլն: Ներկայացնելով Մաշտոցի պայծառ կերպարը՝ «Սուրբին աղոթքը» գլխում հնչեցնում է Մենն Մեսրոպի աղոթքի խոսքերն առ Աստված: Իրար են հաջորդում աղաչանքի ու Աստծո մեծարման խոսքերը. «Լույս տուր ինձի, Աստվածն անհերքելի, «օգնե ինձի, մեծապարգև իմաստության», «օգնե ինձի, Աստված բյուրեղ», «օգնե ինձի, անձիր Աստված», «օգնե ինձի, համագումար Սկզբունք» և վերջում՝

Այս իրիկվան, քառասուներորդ գիշերին
Աստվա՜ծ անհեղի, Աստված անապտույք,
Արարչագործ ձեռքդ իմ ուղնիս երկարե,
Հոն իմ գյուտս խմորելու:

Եվ Մաշտոցի աղոթքին հաջորդում է տեսիլքը՝ մենաստանի պատին քերելքն մի Մեսրով քի մեջ իր լուսագին աջ ձեռքով գրում է հայոց այբուբենը: Հայոց գրերի գյուտը Աստվածահայտնության ամենապայծառ օրինակներից է, Աստծո փառքի տարածումը մեր ազգի վրա:

Резюме

Противопоставляя в советском историческом литературоведении свидетельства армянских историков, в частности Хоренаци и Корюна, взглядам, исходящим из укоренившихся атеистических начал, автор статьи развивает мысль, что Месропу Маштоцу, в создании армянских букв, содействовала сила Господня.

Գրականություն

1. Աշոտ Մկրտչյան - «Հինգերորդ դարի հայ դպրություն», Երևան, 1968թ.
2. Մովսես Խորենացի - «Պատմություն հայոց», Երևան, 1968թ.
3. Կորյուն - «Վարք Մաշտոցի», Երևան, 1962թ.
4. Հր. Աճառյան -«Հայոց գրերը», Երևան, 1968թ.
5. Լևոն Միրիջանյան - «Աստվածաշունչը և մենք», Երևան, 1994թ.